

# ՀԱՅՐԵՆԻՔԸ ՎՏԱՆԳՈՂ ՊԱՌԱԿՏԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

*Posted on February 21, 2015 by Keghart*



Category: [Opinions](#)



**Համօ Մոսկոֆեան, Երեւան - Մոսկուա - Պէյրուօ, 20 Փետրուար 2015**

**Սեղմ յապաւումներով հրատարակուած սոյն յօդուածը կ'արտայայտէ հեղինակին սեփական կարծիքը: Կարգ մը հաստատումներ կը կարօտին հետազօտական թղթակցութեան մը յատուկ տուեալներուն:-Խմբ.**

Մինչ համաշխարհային ռազմաքաղաքական կացութիւնը բարդ ու վտանգաւոր ժամանակաշրջանէ մը կ'անցնի եւ հայ ժողովուրդը կը պատրաստուի նշելու Մեծ Եղեռնի 100ամեակը՝ Մայր Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ, նորանոր դաւեր կը ծրագրուին ինչպէս Հայաստանի եւ աշխարհատարած Սփիւռքի, այնպէս ալ տարածաշրջանի խաղաղասեր ու շինարար ժողովուրդներուն դէմ:

Կարծեք թէ բաւարար չէր ՏԱԵՇ կոչուած արիւնսախում ոճրագործներու կազմակերպութեան գործած ահաւոր սպանդները Միջին Արեւելքի եւ Լիպիոյ մէջ, քրիստոնեաներու, քիւրտերու, եզիտիներու թէ արաբներու հանդէպ՝ որպէս “նախերգանք” 21րդ դարու Օսմանեան Կայսրութեան “վերածնունդ”ին, Թուրքիոյ նախագահ Էրտողանի խելապատիկէն ծնունդ առած: Ապա, նոր տարուան սեմին, Կիւմրիի մէջ ռուս կասկածելի զինուոր մը՝ Վալերի Փերմիաքով կը գործադրէ սպանդը հայ ընտանիքի մը դէմ, այն ալ Մոսկուայի համար այնքա՛ն բարդ ժամանակաշրջանին: Այդ “դիմակաւոր” ոճրագործին ձերբակալութիւնը իր “տեր”երուն Թուրքիա փախչելու ճանապարհին, քողագերծ կ'ընէ հայ-ռուսական դարաւոր ռազմավարական դաշինքին դէմ նախապատրաստուող նոր դաւադրութիւն մը:

Սուրիոյ եւ Ուքրանիոյ ներքին եւ արտաքին ռազմական ու տնտեսական ճակատներուն վրայ գեր-գրադած Ռուսիա, այժմ դէմ-յանդիման կը գտնուի Կովկասի մէջ իր ամենէն կարեւոր զինուորական խարխիսներուն եւ մանաւանդ Երեւանի մէջ նոր “Մէյտան”ներ (թրքերէնով՝ հրապարակ) կազմակերպուելու սպառնալիքներուն առաջ, ֆինանսաւորուած Թուրքիոյ եւ արեւմտեան հետախուզական վարչութիւններու կողմէ:

Անդրկովկասի ամենէն կարեւոր եւ հին նախկին Ցարական կայսրութեան, խորհրդային իշխանութեան եւ Ռուսաստանի Դաշնութեան կողմէ հիմնուած ու բազմիցս վերանորոգուած ռազմակայանին մէջ կը ծառայէր 18 ամեայ Վալերի Փերմիաքով: Կիւմրիի ահաւոր սպանդը անմիջապէս օգտագործուեցաւ Հայաստանը նոր “Կրաստան”ի եւ “Ուքրանիա”ի վերածելու:

“Պապէն աւելի պապական” Հայաստանի “ընդդիմադիր” կարգ մը տարրեր, պահանջեցին Ռուսիոյ դեսպանին վտարումը եւ ռուսական ռազմակայաններու փակումը, մոռացութեան մատնելով այն որ հայ վարորդ մը, ահաւոր արկածով իր բեռակառքով սպաննած էր 15 եւ ծանրօրէն վիրաւորած 40 Ռուսիոյ քաղաքացիներ իրենց հայրենիքին մէջ, տարի մը առաջ:

Այս Հայաստանի անվտանգութիւնը ջլատող քաղաքական կեցուածքները եւ անոնց ետին կանգնած օտարերկրեայ դեսպանութիւններու “դրամաշնորհ”ներ մատուցողները իրենց յիշողութեան մէջ ջնջած էին, որ 1999 թ. Սեպտեմբեր 21ին քաղաքամայր Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ տեղի ունեցաւ փառաւոր զօրահանդէս, որուն մասնակցեցան հայ քաջարի ռազմիկներուն հետ, Ռուսիոյ ճրիօրէն տրամադրած շուրջ մէկ միլիառի հասնող զինատեսակներու, հրթիռներու, հրասայլերու եւ ուղղաթիռներու շարքերը՝ ձեռամբ հայ ժողովուրդի ռուս զաւակ Զօրավար Փաւել

Կրակով:

Պաշտոնամուլութեան եւ արժանամուլութեան մուլուցքով կուրացած, “ընդդիմադիր խաղցող” Հայաստանի քաղաքական որոշ այրեր արդեօք կրնա՞ն ըսել թէ ռուսական զօրքերու կարծեցեալ “վտարում”-ն ետք որո՞նք պիտի պաշտպանեն Հայաստանը: Թուրքիա՞ն, Ազրպէյճա՞նը, դաւադիր Վրաստա՞նը, ԱՄՆ թե՞ կեղծաւոր Եւրոպան, որոնք ամէն առիթով կը փորձեն “հաստատել” նաֆթի եւ կազի պետութեանց հետ իրենց անսահման զօրակցութիւնը, արիւնոտ տուարներով Պաքուին կը յանձնեն դահիճ Սաֆարովը:

Խելամիտ եւ հեռատես ըլլանք, չմոռնալով որ շուրջ 3 միլիոն հայեր կ’ապրին ու կը բարգաւաճին Ռուսաստանի մէջ, նեցուկ կանգնելով իրենց հարազատներուն՝ Մայր Հայրենիքի մէջ:

